ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2017 թվականի հունիսի 12-15-ը
ք.Թեհրան /Իրանի Իսլամական Հանրապետություն/ գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն՝

Հովհաննես Ազիզյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝

ք. Թեհրան, Իրանի Իսլամական Հանրապետություն, 2017 թվականի հունիսի 12-15-ը

4. Հրավիրող կողմը՝

Իրանի Իսլամական Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարությունը և Առևտրի զարգացման կազմակերպությունը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ

5. Գործուղման նպատակը՝

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ժամանակավոր ազատ առևտրի համաձայնագրի բանակցությունների չորրորդ փուլին մասնակցություն,

«ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ԻԻՀ ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի միջև համագործակցության մասին» Փոխըմբռնման Հուշագրի ստորագրում:

6. Քննարկված թեմաները՝

Քննարկվել են՝

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ժամանակավոր ազատ առևտրի

Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) նախագծի տեքստը, որը կողմերի միջև լրամշակվեց և, համաձայնեցվեց, բացառությամբ որոշ դրույթների,

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների և Իրանական Իսլամական Հանրապետության կողմից ներկայացված այն ապրանքների ցանկերը, որոնց մասով կողմերը պատրաստ են տրամադրել միմյանց սակագնային արտոնություններ: Նշյալ ցանկերում ներառված են ինչպես գյուղատնտեսական, այնպե էլ արդյունաբերական ապրանքներ:

Քննարկվել է նաև «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ԻԻՀ ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի միջև համագործակցության մասին» Փոխըմբռնման Հուշագրի տեքստը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաձայնագրի շուրջ քննարկումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պատվիրակություններ՝ նախարարի տեղակալների մակարդակով, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետության պատասխանատուներ առանձին ոլորտների մասով:

Ոլորտային քննարկումների ժամանակ ներկայացվել են իրանական կողմի հիմնական տարաձայնությունները Համաձայնագրի նախագծի առանձին բաժինների վերաբերյալ, և արդյունքում մի շարք հարցերի ուղղությամբ կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն:

Հունիսի 14-ին հանդիպում է կայացել ԻԻՀ ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտում: Հանդիպման ընթացքում հայկական կողմը նշել է, որ ՀՀ-ն պատրաստակամ է ընդլայնելու համագործակցությունը ԻԻՀ-ի հետ տնտեսության բոլոր բնագավառներում, իսկ «հալալը» ևս մի հնարավորություն է, որը կբերի փոխադարձ առևտրի և զբոսաշրջային հոսքերի ավելացմանը:

Հանդիպման արդյունքում ստորագրվել է «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ԻԻՀ ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի միջև համագործակցության մասին» Փոխըմբռնման Հուշագիրը, համաձայն որի, երկու մարմինների միջև նախատեսվում է համագործակցության զարգացում և ընդլայնում հետևյալ ուղղություններով,

մասնավորապես՝ սննդի և ոչ ոգելից խմիչքների ոլորտի իրավական դաշտի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, «հալալ» ստանդարտի վրա հիմնված ապրանքների հսկողության վերաբերյալ դասընթացների, աուդիտի իրականացում, երկու կողմերի շուկաների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, համատեղ նախագծերի իրականացում, ՀՀ տարածքում ԻԻՀ «հալալ» ստանդարտ մակնշման տրամադրում, «հալալ» արտադրանքի հավատարմագրման ընթացակարգերին առնչվող տեղեկատվության փոխանակում և այլն: Ստորագրված հուշագրով կընդլայնվի համագործակցությունը հիշյալ բնագավառում և կարևորեց այն փաստը, որ «հալալի» կանոնների իրականացումից կօգտվեն և զբոսաշրջիկը, և գործարարը: Իրանական կողմը առաջարկեց քննարկել նաև «հալալի» կիրառման հնարավորությունը ոչ պարենային ապրանքների նկատմամբ:

Հանդիպման ժամանակ կարևորել է նաև իրանական և ԵԱՏՄ շուկաներում պարենային և ոչ պարենային արտադրանքի նկատմամբ կիրառվող անվտանգության պարտադիր նորմերի համապատասխանության հավաստման մարմինների /փորձարկման լաբորատորարիաների/ երկու երկրներում մասնաճյուղերի հիմնման, ստանդարտների մշակման, չափագիտության ոլորտներում համագործակցության անհրաժեշտությունը:

Առևտրատնտեսական հարցերի քննարկում Իրանի առևտրի արդյունաբերության, հանքերի և գյուղատնտեսության պալատում հանդիպում է կայացել Իրանի առևտրի արդյունաբերության, հանքերի և գյուղատնտեսության պալատի փոխնախագահ պարոն Քարբասիի հետ: Հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվեց հայ-իրանական առևտրատնտեսական համագործակցության ընդլայնումը, առևտրաշրջանառության ծավալի աճը, երկու երկրներում գործող գործարարների համար նպաստավոր պայմանների ստեղծումը և առևտրում առկա տեխնիկական խոչընդոտների վերացման անհրաժեշտությունը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց տեղեկատվություն փոխանակել փոխադարձ առևտրում առկա ոչ սակագնային կարգավորումների վերաբերյալ, ինչը կբարձրացնի երկու երկրների գործարարների իրազեկվածությունը և կնպաստի արտահանման ծավալների աճին:

Հանդիպում է կայացել նաև ԻԻՀ նանոտեխնոլոգիական նախաձեռնությունների խորհրդում, որտեղ քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հաշվի առնելով Համաձայնագրի կնքման հրատապությունը՝ բանակցությունների արդյունքում նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ նշված Համաձայնագրի շուրջ կայանալիք հերթական փուլը կանցկացվի 2017 թվականի հուլիսի 4-5-ը ք. Երևանում:

Ստորագրվեց «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ԻԻՀ ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի միջև համագործակցության մասին» Փոխըմբռնման Հուշագիրը:

9. Գործուղվող՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Հովհաննես Ազիզյան

10. Ստորագրություն, ամսաթիվ

26.06.2017 թ.